

ԱՐԳՈՆԱԿՈՐԴՆԵՐԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ

ՄԵՐԳԷՑ ՈՒՍԱՌԵԱՆ

Յունական հին գրականութիւնը աւանդել է «Արգոնաւտիկա» անունով մի հնագոյն առասպել, որի հիմքում ընկած է դէպի Կոլխիդա արշաւելու եւ «ոսկեգեղմ» որոնելու պատմութիւնը։ Այդ արշաւախրմբումն էր նաև Արմենոս անունով զօրավարներից մէկը, որի անունն էլ հիմք դարձաւ արմէնների գրսեկութեան տեսութեանը։

Արգոնաւորդների արշաւանքի ժամանակաշրջանը ոմանք համարում են 7-րդ դարը, իսկ ոմանք էլ՝ Հոմերոսի պոէմներից առաջ, նախքան մեր թուագրութիւնը։ Նշած զարաշրջաններում թունաստանը Սեւ Ծովի շրջակայքում ստեղծել էր գաղութներ։ Նման մի գաղութ էր նաև Կոլխիդան (Կողքիսը)։ Հասկանալի է, որ ոսկէ բուրդ գոյութիւն ունենալ չի կարող։ Այդ առասպելի մէջ, մեր կարծիքով, թաքնուած էր պրոնգ, ոսկի, պղինձ, երկաթ եւ ուրիշ մետաղներ ձեռք բերելու փոխարերական իմաստ։ Ոսկեգեղմ փնտոելու գաղտնիքը գաղութներ ստեղծելու նպատակ էր հետապնդում։

Կոլխիդան այն ժամանակ եղել է մերձսեւծովեան մետաղամշակման նշանաւոր շրջաններից մէկը։ Դեռևս Հոմերոսի «Իլիական»ից է յայտնի, որ Սեւ Ծովի հարաւ-արեւելեան շրջանները հարուստ են ոսկով, արծաթով, երկաթով եւ պղնձով¹։ Արեւելեան Պոնտոսի տարածքում ապրող խալիքները, տիբարենները, մոսինեոկները, կոլխերը

1. Հոմերոս, Իլիական, Երեւան, 1955, Գլ. է., էջ 156։

Եւ ուրիշ ցեղեր զբաղւում էին մետաղագործութեամբ։ Հոմերոսը մետաղագործ խալիքների ցեղային տարածքն անուանել է «Արծաթի երկիր» եւ «Երկաթի երկիր»²։

Բայց մետաղներով հարուստ շրջանները միայն Արեւելեան Պոնտոսը չէր։ Մետաղամշակութիւնը, որն սկիզբ է առել պղնձագործութիւնից, հազարամետակներ առաջ եղել է Փոքր Ասիայի եւ Հայկական Լեռնաշխարհում ապրող հնագոյն տեղաբնակների զբաղմունքներից մէկը։ Այդ կապակցութեամբ Վ. Լանդսբերգի գրել է. «Չունենալով պղնձի հանքավայրեր, հին շումերներն օգտուում էին Փոքր Ասիայի եւ Հայկական Լեռնաշխարհի պղնձից»³։ Ն. Բ. Եանկովսկայան նոյնպէս նշում է, որ Տաւրոսի, Ռշտունեաց, Սասոյ, Կորճայքի եւ Տայոց սարերն ու Հայկական Միջագետքը պղնձի, կապարի, արծաթի անսպառ շտեմարաններ էին⁴։

Փոքրասիական տարածքի եւ Հայկական Լեռանշխարհի հարուստ մետաղների մասին է. Քլինգել-Բրանդտը յայտնել է հետեւեալ կարծիքը. «Գործիքներ, զարդեր եւ գործածութեան առարկաներ պատրաստելու համար հարկաւոր էին մետաղներ, նախ եւ առաջ պղինձ։ Այն ներմուծում էին զիխաւորապէս Փոքր Ասիայից, քանի որ այնտեղ, ինչպէս եւ Հայաստանի լեռներում, այլեւ Կովկասում եւ արեւմտեան ծովափին էին գտնում մետաղէ հարուստ հանքավայրերը»⁵։ Այնուհետեւ անգլիացի խոշոր հնէաբան Գ. Զայլդը նշում է, որ Միջագետքի երկրները արծաթը ստանում էին Տաւրոսից։ Շումերները նոյնպէս պղինձ չունենալով այն ստանում էին Օմանից, Իրանական Բարձրաւանդակից եւ Փոքր Ասիայի արեւելեան մասերից։ Ապա նա շարունակում է. «Հին Հայաստանում ինչ-որ ցեղեր գտել էին մետաղի ձուլման խնայողական եղանակը, որ մինչեւ երկրորդ հազարամետակի վերջը այն պահել են գաղտնի»⁶։

Մետաղամշակութեան արուեստը գիտութեան մէջ ընդունուած է 5-4-րդ հազարամետակից։ Բայց վերջին ժամանակների պեղումները նոր խօսք են ասում։ Անգլիացի հնէաբան Ջ. Մելարտը Փոքր Ասիայի արեւելեան շրջաններում պեղումներից գտաւ Ք. Ա. 7-6-րդ հազարամ-

2. Մ. Ի. Մաքսիմովա, Մերձակեւծովեան Հարաւ-Արեւելքի Անտիկ Քաղաքները, Մոսկով, 1956, էջ 143-144 (ոռուսերէն)։

3. Հայկ. ՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիա, Հայ ժողովրդի Պատմութիւն, Ա. Խոր., Երևան, 1971, էջ 140։

4. Ն. Բ. Եանկովսկայա, Ասորեստանեան Պետութեան Տնտեսութեան Մէկ Քանի Հարցեր, «Էրարքը Հնագոյն Պատմութեան», 1956, թիւ 1, էջ 28-40 (ոռուսերէն)։

5. Է. Քլինգել-Բրանդտ, Ճանապարհորդութիւն Դէպի Բաբելոն, Երեւան, 1981, էջ 112։

6. Գ. Զայլդ, Հին Արեւելք, Մոսկով, 1956, էջ 201, 242 (ոռուսերէն)։

հակներին պատկանող պղնձէ զարդեր եւ զանազան գործիքներ: 1963 թուականին ամերիկացի գիտնական Ռ. Պրէյտուուսը նոյն տարածքում նոյնպէս գտաւ 7-րդ հազարամեակին պատկանող պղնձէ զարդեր եւ գործիքներ: Պարզուեց, որ մետաղամշակութիւնը Փոքր Ասիայում եւ Հայկական Բարձրաւանդակում գոյութիւն է ունեցել 9 հազար տարի առաջ⁷:

Մեր կարծիքով Հայկական Բարձրաւանդակում եւ նրա մերձակայ շրջաններում ապրող մետաղագործ ցեղերի հետ հայերը եւս եղել են առաջին մետաղը՝ պղինձը մշակողներից մէկը: «Հայ», «արմէն», «սումերի» եւ «Փլա»՝ հայերին տրուած անունները հասարակական (սոցիալական) եղբեր են, բոլորն էլ նոյն բովանդակութեամբ:

Հայ անուան ծագման մասին անդրադարձել է Ն. Մառը, գտնելով, որ հայերը յարէթական ծագումով սոներ-հենիոխներն են, իսկ արմէնները՝ եկուոր արիոնեւրոպացիներ⁸: Նա իր մէկ այլ աշխատութեան մէջ հայ ցեղանունը ծագումնաբանել է հայ արմատից, որ ըստ նրա՝ նշանակել է «Հալել», «Հալածել», «Հոսել», «Վազել», «Քշել»: Նոյն հիմքից է համարել նաեւ խալիք ցեղանունը: Այստեղից գիտնականը եղբակացրել է, որ հայերը մետաղագործ ժողովուրդ էին, հետեւապէս ցեղանունը ծագում է «երկաթ» բառից⁹:

Մեզ չի համոզում, որ հայ անունը ծագած լինի «Հալել» եւ նման այլ բառերից, չնայած ցեղանունը (էթնոնիմը) նա համարել է մետաղական ծագում: Հայ անունը ծննդաբերելով երկաթէ դարից, Ն. Մառը այն առընչում է արգոնաւորդների արշաւանքի պատմութեանը, համամիտ լինելով այն գիտնականներին, որ այդ արշաւանքը տեղի է ունեցել Հումերոսի պոէմներից առաջ, Ք. Ա. 12-10-րդ դարերում, «արիոնեւրոպացիներ»ի ներաշաւի դարաշրջանում: Ընդունելով հայ անունը «Հալ» հիմքից՝ նշանակում է հայ ցեղի (էթնոս) երեւան գալը տանել յետագոյն շրջան:

Միւս կողմից, յարէթարանի մէկ այլ կարծիքով հայ ցեղանունը համաստեղութեան անուն է՝ Հայկ-Օրիոն անունից¹⁰: Այստեղ եւս նա

7. Ն. Զերմիխ, «Գիտութիւն եւ Կեանք», 1968, թիւ 7, էջ 33-37 (ոռւսերէն):

8. Ն. Մառ. Մակուք Ռուսա Բ. ի Արձանագրութիւնը, «Ռուսական Հնագիտական Ընկերութեան Արեւելագիտական Բաժնի Հաղորդումներ», ԽԵ. Խոր., 1921, էջ 5 (ոռւսերէն):

9. Ն. Մառ. Հայերի Ցեղային երկու Անուանումների Աստղագիտական եւ էթնիկական Նշանակութիւնը, «Ռուսական Հնագիտական Ընկերութեան Արեւելագիտական Բաժնի Հաղորդումներ», ԽԵ. Խոր., 1921, էջ 235 (ոռւսերէն):

10. Նոյնը:

Հաշուի չի առել, որ հայ անունն աւելի հին է, քան նոյն ցեղի ստեղծած Հայկ անունը:

Ի. Մեշշանինովը նոյնիսկ հայ անունը ծննդաբերել է Խալդի աստծու անունից¹¹: Բայց Խալդի աստծու անունը յայտնի է Ք. Ա. 9-րդ դարից, իսկ հայ անունը հազարամետակների պատմութիւն ունի: Բոլոր գէպքերում ի. Մեշշանինովը նոյնպէս հայ անուան ծագումը փորձում էր տանել արգոնաւորգների ժամանակաշրջանը, այսինքն՝ համամիտ լինելով թրակա-թեսալական տեսութեանը: Բայց նման տեսութեան ջատագովները մոռանում են, որ աստուածանունները ձեւաւորուել են աստուածներ ստեղծող ցեղերի կողմից, ուստի՝ ցեղանունները դիցանուններից հին են: Տուեալ գէպքում հայ ցեղը չէր կարող հազարամետակներ գոյութիւն ունեցող իր անունը փոխել 9-րդ դարում, թէկուզ դրանից առաջ ստեղծած իր աստծու անունով:

Մեր կարծիքով հայ անունը ծագում է Հնդեւրոպական նախալեզուի *AYES>«պղինձ» բառից: Արմատական այդ բառը, մայր լեզուից անջատուած, նոր ձեւաւորուող հայերէնում ստանալով և յենարան հնչիւնը, բառակազմել է HAYES... Հնդեւրոպական նախալեզուից հայերէնին անցնող նման բառերն ունեն հետեւեալ պատկերը. *AN>հան(տատիկ), *OD>հոտ, *OMO>հում եւ այլն: Այնուհետեւ, Հնդեւրոպական ծագումով մի շարք բառեր, որոնք վերջանում են *S հնչիւնով հայերէնում սղւում են, ինչպէս՝ *PLUSO>լու, *GRSO>ծոռ, *DERSO>քող, կաշի: Հետեւեարար օրինաչափ է նաեւ HAYES>HAY: Միւս կողմից, երբ *S-ն հանդէս է գալիս իրբեւ յոգնակերտ ածանց, այն հայերէնում փոխում է ք-ի, ինչպէս *MES>մեք, *TRAYES>երեք, *SWESOROS>քորք («քոյրեր»)¹²: Այդ նոյն ձեւով էլ կը ստանանք հայք, ցեղի տարածքային անունը:

Հնդեւրոպական մայր լեզուից անջատուած առաջին ցեղերից մէկը հազարամետակներ առաջ մկրտել է իր հասարակական անունը՝ հայ, այսինքն «պղնձագործ», եւ այդ անունը տարածուել է լեռնաշխարհում ապրող նրա արիւնակից ցեղերի վրայ, որպէս հաւաքական անուն: Խեթերը Հայք անունը կոչել են Խայասա, փոքրասիական սա տեղանուան յոգնակերտ ածանցով¹³:

11. Ի. Մեշշանինով, Հին Վանի Խալդի Աստուածը, «Արեւելագիտական Հաղորդումներ» Ա. Խոր., 1927: «Նիւթական Մշակոյքի Պատմութեան Պետական Ակադեմիայի Հաղորդումներ», ԺԴ. Խոր., բողարկում 4-7, 1932, էջ 9 (ուստերէն):

12. Հ. Աթառեան, Լիակատար Քերականութիւն Հայոց Լեզուի, Զ. Խոր., Երեւան, 1971, էջ 562, 579:

13. Սիրիայի Հիւսիսում էպու Քաղաքի աւերակները պեղելիս խալացի հմէարանները վերցերս գտան 15,000 սալիկ: Դրանցից երեխում յիշառակուած են «ղումա խայա»,

Հնդեւրոպական այն ցեղը, որ առաջինը գտաւ պղնձի գիւտը՝ AYES բառից ստեղծեց պղնձի, Հովանաւոր աստծու Այա անունը: Իսկ պղնձագործ հայերը պղնձի իրենց Հովանաւոր աստծուն անուանեցին Հայկ, որից էլ առաջին նահապետ Հայկ անունը: Վասի թագաւորութեան պանթէոնում Մշերի զրան արձանագրութեան մէջ կայ Այա անունով մի աստուած, որ կարծում ենք եղել է պղնձի Հովանաւոր աստուածը: Հին աշխարհում մետաղները պահպանուել են նաեւ սրբազն տաճարներում: Արդինի (Մուսասիրի) Խալդի աստծու եւ միւս տաճարներից Ասորեստանի թագաւոր Սարկոն երկրորդը, Ք. Ա. 8-րդ դար, թալանել եւ Խորսաբագի իր պալատն է տարեկ Հարիւրաւոր քիլոկրամներով ոսկու, արծաթի, պղնձի եւ երկաթի սալիկներ: Պղնձի աստծու՝ Այա անունով է կոչուել նաեւ մետաղաչատ Խաղտիքի տարածքը¹⁴: Այս աստծու անունն էր կրում Վանայ լճի հարաւ-արեւելեան մերձափնեայ Այադի ամրոց-քաղաքի անունը:

Հայ միւս աւելի տարածուած անունը արմէն է, որ հայերի վաղնջական հարեւաններ՝ յոյների եւ իրանացիների միջոցով տարածուել է ամրող աշխարհում: Արմէն անունը նոյնքան հին է, որքան հայ անունը: Գտնում ենք, որ այս անունը նոյնպէս ծագում է Հնդեւրոպական նախալեզուի մէկ այլ բարբառային տարբերակից: Արմէն անունը ծագում է Հնդեւրոպական նախալեզուի *ORUD, այսինքն՝ «պղնձ» բառից: *ORUD (*ROUDHO, *REUD) արմատական բառը Հնդկերէնում ORUD է, հին պարսկերէնում՝ ROD, սողոկերէնում՝ ROD, լատիներէն՝ RUDAS, հին սլաւոներէնում՝ RUDA, հին հրւիսային՝ RAUDI, բասկերէն՝ URRAIDA, աքբաղերէն URUDU եւ այլն:

Գիտութեան մէջ այն կարծիքն է յայտնուել, որ իրր ORUD «պղնձ» բառը չումերական ծագում ունի, այն աքբաղերէնին է անցել՝ URUDU, իսկ Հնդեւրոպական նախալեզուին՝ ORUD: Այդ կարծիքը համոզիչ չէ, քանի որ մետաղանունները առաջանում են այնտեղ, որտեղից զրանք ստանում եւ մշակում էին: Սկզբում մշնք ներկայացրինք այն խոշոր գիտնականների կարծիքները, որ չումերներն առհասարակ մետաղներ չեն ունեցել, իսկ մասնաւորապէս պղնձն ստանում էին փոքրասիական երկրներից եւ Հայաստանից: Միւս

այսինքն՝ «հայորդի» կամ «խայա երկրի որդի» փոքրասիական եզրաբանութիւնը, որ տեխսում կապուած է Ռւրամէ (Արմէ) երկրանուան հետ: Առեւտրական սալիկներում յիշատակուած հայերը Ք. Ա. 2500 բուականներին էպլայի շուկաներում կատարում էին մետաղների առեւտուր:

14. Ա. Խաչատրեան, Հայաստանի Սեպագրական Շրջանի Քննական Պատմութիւն, Երևան, 1933, էջ 104:

կողմից, շումերէնը եւ սեմիտական լեզուները շունչին Օ Հնչիւնը, դրա փոխարէնը Ս էր¹⁵: Հետեւապէս, եթէ պղինձ բառը հնդեւրոպական նախալեզուն փոխառած լինէր շումերներից, ապա հնդեւրոպական նախալեզուն URUDU բառը կ'ընդունէր նոյնութեամբ, որովհետեւ նախալեզում կար Ս Հնչիւնը: Այստեղից հետեւում է, որ հենց շումերական բառն է փոխառութիւն:

Որպէսզի ստացուի «պղնձագործ» հասարակական եզրը, պէտք է հնդեւրոպական նախալեզուի «պղինձ» եւ «մարդ» բառերը համապրուեն՝ *ORUD+ *MEN=ORUDMEN: Բառակազմութեան ժամանակ անուանասկզբի Օ-ն օրինաչափօրէն փոխւում է Ա-ի, իսկ անուանամիջի Ծ Հնչիւնը սղուում է, ուստի կը ստանանք ORUDMEN>ARMEN հասարակական «պղնձագործ» եզրաբանութիւնը: Յայտնի է, որ հնդեւրոպական ծագումով որոշ բառեր հայերէն տառադարձուելիս բառամիջի Ծ Հնչիւնը ընկնում է, ինչպէս օրինակ, *SALD>աղ, *LORDSKO>լորց, *MUNDYO>մունջ եւ այլն: Բերելով աղ բառի օրինակը Հ. Աճառեանը եզրակացնում է. «Կարող էր նաեւ հնդեւրոպական նախալեզուի մէջ էլ այդպէս լինել»¹⁶:

Արմէն անունը տրուել է հայերին, հնդեւրոպական նախալեզուի մէջ այլ բարբառով: Արմենիա երկրանունը յայտնի է Ք. Ա. երկրորդ հազարամեակից, խեթերէն՝ Արմանա, աքքաղերէն՝ Արմանու կամ Արմանի, իսկ Վանի թագաւորների արձանագրութիւններում՝ Արմէ¹⁷, որն էլ իր հերթին գրականութեան մէջ է մտել Արմէ-Շուաղրիա անունով¹⁸, որպէս, հայերի կազմաւորման նախագոյն օճախներից մէկը: Արմէնների տարածքը՝ Վանայ լճի աւազանի շրջանները սեմացիներն անուանել են Ուրարտու, իսկ երրայեցիներն՝ Արարատ:

Ուրարտու անուան գրաւոր առաջին հազորգողը եղել է Ասորեստանի Սալմանասար Ա. թագաւորը, Ք. Ա. 13-րդ դար, Ուրուատրի ձեւով: Արձանագրութիւններում այդ անունը նաեւ Ուրատրիէ: Երկու գէպքում էլ տեղանունը RI յոգնակերտով է, ինչպէս՝ Նաիրի, Շուաղրի, Մեխորի եւ այլն: Այստեղից հետեւում է, որ Ուրարտու անուան հիմքը նոյն URUDU «պղինձ» բառն է, որ RI յոգնակերտով կազմուել է URUDRI>URUATRI>URATRI անունը եւ, որն էլ արմէնների երկիրն է: Աքքաղեցիներն այդ անունը Ս յոգնակերտով արտասանել են Ուրարտու, այս էլ վերջին R հնչիւնի դրափոխութեամբ՝ Ուրարտու: Ուրա-

15. Հ. Աճառեան, նշ. աշխ. էջ 125:

16. Նոյնը, էջ 533:

17. Վ. Ն. Խաչարեան, Խեթական Տէրութեան Արեւելեան Նահանգները, Երևան, 1971, էջ 104, 107 (ուստեւ):

18. Հայ Ժողովրդի Պատմութիւն, Ա. Խար., էջ 423-435:

տու ձեւը բարելական է ԲՌՇ հնչիւնափոխութեամբ։ Հետեւապէս Ուրարտու կը նշանակի «պղնձի երկիր»։ Սիալ են նրանք, ովքեր Ուրարտուն չեն համարում Հայաստան։ Մի հարստութեան սեպագրական, պաշտօնական, ժամանակաւոր գրաւոր լեզուն հիմք չպէտք է դառնայ ժխտելու տարածքի դրութեան տէր հայերի լինելիութեան հարցը։ Եթէ խնդրին այդ ձեւով մօտենանք, ապա պէտք է ասենք, որ արամերէն լեզուով գրութիւնների ժամանակաշրջանում Հայաստանում ապրում էին միայն արամէացիները, իսկ հելլենիզմի ժամանակաշրջանում՝ յոյները, չէ՞ որ նախքան քրիստոնէութիւնը Հայաստանում հայերէն գիր եւ գրականութիւն չի եղել։

Հարցի նման մօտեցումը շատերին թերել է այն սիալ համոզման, որ հայերը եւ արմէնները տարբեր ծագմամբ ցեղախմբեր էին, արմէնները՝ «արիոներոպացիներ», իսկ հայերը՝ «ազիանիք»։

Հայերի հնագոյն հարեւաններից մէկը՝ քրդերը հայը անուանում են Փըլա։ Ն. Մառը կարծել է, որ այդ բառը փոխառութիւն է, արաբերէն Փալլահ՝ «գիւղացի»¹⁹։ Այս բացատրութիւնը անհամոզիչ է։ Նախ քրդերը երբ այդ անունով որակել են հայերին, իրենք նոյնպէս գիւղացիներ էին։ Հետեւապէս նոյն վիճակի մէջ գտնուող երկու ցեղերից մէկը միւսին գիւղացի անուանել էիր կարող։ Միւս կողմից, արաբերէն բառը ուշ ժամանակի փոխառութիւն է եւ, վերջապէս ինչո՞ւ պիտի քրդերը հայերի ցեղային անունը արաբերէն բառով տային, երբ իրանական ցեղակից բոլոր ժողովուրդները ունէին արմանի անունը։ Քրդերը պատկանում են իրանական լեզուանիւղին, իսկ Փըլա, Փելէ բառը հին պարսկերէնում նշանակում է «պղնձ» (Փելլեղ՝ մետաղ)։ Քրդերը եւս հայերին անուանել են նոյն «պղնձագործ» կամ «մետաղագործ» հասարակական եղբարանութեամբ, ինչպէս հին պարսկեները նոյն բովանդակութիւնն ունեցող արմանի կամ արմանիկ անունը։

Հայերի չորրորդ անուանումը սոմեխի է։ Այս հարցն աւելի կնճռոտ է, եւ շատերն են խօսել դրա մասին, յայտնելով տարբեր կարծիքներ։ Գ. Խալաթեանցը փորձել է սոմեխի անունը ծագումնաբանել իսկեթերէն Սուխմա, Զուխմա, Յուխմա կամ աքքաղերէն՝ Սուխմու տեղանունից, որ Բալահովիտն է²⁰։ Այսուհետեւ Ն. Մառը այդ հարցին նայել է իր յարէթական տեսադաշտից, պնդելով, որ սոմեխները բնիկներ էին, իսկ արմէնները եկուոր արիոներոպացիներ։ Նա սոմեխի անունը բաժանել է իրը ՏՕ յարէթական բարբառային նախածանցի եւ մեսին։

19. Ն. Մառ, Հայերի Ցեղային Երկու Անուանումների . . . , էջ 240։

20. Գ. Խալաթեանց, «Արևելիան Հիմ Յուշարձաններ», Բ. Խոր., քողարկում 2, էջ 126 (ռուսերէն)։

մեխ ցեղանուան: Մակայն ուրիշ անգամ նա մեսի անունը ծննդարերել է բասկեր ցեղանունից, կամ էլ նրան վերագրել է աստղային ծագում²¹:

Միայն է ոչ միայն Ն. Մառի իրար հակասող յարէթական ծագման նման բացատրութիւնները, այլ Հնացած եւ ոչ գիտական «Եւրոպիզմը», որոնցով փորձ էր արւում հայ եւ արմէն անունները ծագումնաբանօրէն հակադրել իրար, իրեւ տեղական եւ եկուոր երկու տարրեր ցեղեր:

Իրերական լեզուները չեն ունեցել SO նախածանց, իրեւ բարբառային ձեւ: Վրացերէնն ունի SA նախածանցը: Այն չունի նաեւ A>O հնչիւնափոխութիւնը, որ A-ն փոխուի O-ի, հետեւապէս մէկ այլ ենթադրութեամբ՝ սամիւրեթի («Հարաւային») ածականը չի դառնայ սոմեխի:

Սոմեխի անուան մասին անդրադարձել են Գ. Ա. Մելիքիշվիլին եւ Բ. Բ. Պիոտրովսկին, որոնք հակուած են Գ. Խալաթեանցի ենթադրութեանը: Վերջին կարծիքը հիմնաւոր չէ նախ այն բանի համար, որ բացառուած է մէկ տեղանունից ծննդաբերել մի ցեղանուան ծագումը: Այնուհետեւ Սուխմա տեղանուան ճշգրիտ ընթերցումը դեռևս չունենք, իսկ Յուխմա եւ Զուխմա անուններից գժուար թէ սոմեխի անուն ծնուի: Միւս կողմից, Բալահովիտը պատմութեան մէջ ինչ-որ մի բանով առանձնայատուկ չէր, որ վրացական ցեղերը շփման եզրեր ունենային, մանաւանդ իրերիան եւ Բալահովիտը միմեանցից շատ հեռու էին: Իրերական ցեղերը սոմեխի են անուանել այն հայերին, որոնք իրենց անմիջական հարեւաններն էին: Իսկ իրերական ցեղերի այդպիսի հարեւանները Արեւելեան Պոնտոսում մոսխերի կամ մոսխների ցեղն էր:

Մոսխերը Գ. Ա. երկրորդ հազարամեակին իջել են հարաւ, որոնց մի մասը բնակուել է Կարիայի եւ Լիկիայի միջեւ, իսկ մի մասը հաստատուել է Հայաստանի Մուշ, Մոկս, եւ Աղձնիք գաւառներում: Մոսխերի մասին յիշատակել է Դիկլատպալասար Ա., Գ. Ա. 1130 թ., մուշկեր անունով:

Ֆր. Բիլարելը նշել է, որ խեթերի կործանումից յետոյ, մուշկիները եփրատի եւ Հալիս գետերի միջեւ երկար ժամանակ կարեւոր դեր են խաղացել²²: Մեզ համար շատ կարեւոր է Սորարոնի այն վկայութիւնը, որ «Անտիտաւրոսից դէպի հիւսիս ձգւում է մի լեռնաշղթայ, որի մի

21. Ն. Մառ, Հայերի Ցեղային երկու Անուանումների..., էջ 238-239: Արխագների Լեզուի եւ Պատմութեան Մասին, Մուկուա-Լիմինկրատ, 1938, էջ 51 (ոռուսերէն):

22. Ա. Խաչատրեան, Աշ. աշխ., էջ 236-237:

մասը կոչում է Պարիագրես, իսկ միւս մասը՝ Մոշեան լեռներ... Սրանք ներամփոփում են ամբողջ Արմենիան, մինչեւ Իրերիա»²³:

Մոսիսերի անունը Քսենոփոնի «Անարասիս» գրքում ունի «մոսսինոյկոյ» անունը, Արեւելեան Պոնտոսում: Ք. Ա. Ե-րդ դարի յոյն պատմիչը տալիս է, որ նրանք ապրում էին խալիբների հարեւանութեամբ եւ նրանց տները փայտաշէն էին²⁴: Այստեղից էլ ոմանք կարծել են, որ ցեղանունը ծագում է նրանց փայտաշէն կառոյցների անունից: Մ. Մաքսիմովան գտնում է, որ Դիոգորի եւ Ստրաբոնի յիշատակած մոստնէ՝ «աշտարակ» անունից էլ ծագում է մոսինոյկներ, այսինքն «աշտարակաւորներ» ցեղանունը²⁵: Աս. Խաչատրեանը ցեղանուան հիմքը համարել է լիւղերէն MUSON («Հաճարի»)²⁶, այսինքն՝ նրանց տները հաճարի փայտից էին: Սակայն Ստրաբոնը լաւ իմանալով իր նախորդների մոսինոյկ անուանումը, այնուամենայնիւ, այդ ցեղին նա տուել է «Հեպտակոմետներ», բառացի՝ «Յօթնաշէնցիներ» անունը:

Քսենոփոնը նկարագրում է, որ մոսինոյկները (մոսսունոյկոյ) ապրում էին Յօթյարկանի փայտաշէններում: Այդ «Յօթյարկանի» եւ Ստրաբոնի նշած «Յօթնաշէնցիների» միջեւ ինչ-որ նմանութիւն կայ: Բայց Ստրաբոնը նկատի չի ունեցել «Յօթյարկանի» տները, այլ Յօթ գիւղերը: Խօսքն այն մասին է, որ մոսիսերի—մոսինոյկների գիւղերը դասաւորուած էին Յօթ-Յօթ: Սա ունէր իր պաշտպանական նշանակութիւնը, ներկայացնելով ինչ որ ոյժ: Բոլոր դէպքերում Ստրաբոնի վկայումը հերքում է «մոսսինոյկներ» անուանումը, որովհետեւ դա ցեղի ճիշդ անունը չէր: «Անարասիսի» թարգմանիչ Ս. Գրքաշարեանը ծանօթագրութիւնների մէջ խօսելով մոսինոյկների մասին գրում է. «Յօթեւս սա տեղական տերմինի՝ յոյների կողմից արուած ժողովրդական ստուգաբարանութիւն է»²⁷: Սա մեզ լրիւ համոզում է: Մոսինոյկները բնական պայմաններից ելնելով, ապրում էին փայտաշէն գիւղերում: Հին յոյները նմանահնչիւնութեամբ մոսոիս անունը նմանացրել են մոստունես («փայտաշէն») բառին, ժողովրդական ստուգաբարանութեամբ:

Մոսիսերի մասին հետաքրքիր տեղեկութիւն է տալիս «Աստուածաշունչը»: «Գիրք Ծննդոց» բաժնում գրուած է. «Յարէթի որդիները՝ Գամեր, Մագող, Մաղա, Յաւան, Թորել, Մոսոք ու Թիրաս»: Այնուհետեւ «Մարզարէութիւն Եղեկիէլի» գլխում գրուած է. «Անոնք քու

23. Նոյնը, էջ 240:

24. Քսենոփոն, Անարասիս, (թրգ. Ա. Գրքաշարեան), Երեւան, 1970, էջ 117-121:

25. Մ. Ի. Մաքսիմովա, նշ. աշխ., էջ 260:

26. Ա. Խաչատրեան, նշ. աշխ., էջ 244:

27. Քսենոփոն, Անարասիս, էջ 267:

վաճառանոցներուդ մէջ արծաթի, երկաթի, անագի ու կապարի առուտուր կ'ընեն: Յաւան, Թորել ու Մոսոք քու վաճառականներդ էին: Անոնք քեզի հետ մարդոց հոգիներու ու պղնձէ ամաններու առուտուր կ'ընեն»²⁸:

Աս. Խաչատրեանը հաւանական է համարել, որ մոսինոքները նոյն մոսքերն են²⁹: Իսկ Խ. Սամուէլեանի կարծիքով վրացերէն սոմեխին նոյն մոսոխ անունն է³⁰:

Ե. Ֆոռերի կարծիքով MOSK անուան Կ-ն եւ հայկական Ք յոդնակերտները նոյնն են³¹: Ստրաբոնը գրում է, որ Հայերի եւ մոսինոյկների կենցաղը նոյնն է³²: Բիբլիական աւանդութիւնը ազգակցական կապեր է տեսնում Թոգարմայի եւ մոսոքների միջեւ, որոնց Հայերը համարել են իրենց նախնիները³³:

Մոսիսերի (մոսինոյկների, մուշկերի) յիշատակը մեզանում մնացել է Մոկք գաւառանունով, իր Մոկս կեղրոնով: Մոսիների անուան մէկ այլ ձեւն է մոչեր: Կարծում ենք այս անունով է Մուշ քաղաքանունը եւ Անձիտ գաւառի Մուշունի տեղանունը: Ախլցիսայի հայերի խօսուածքում Տոշրա նշանակում է պղնձէ գաւաթ:

Մոսիսերի մասին հայ բանահիւսութեան մէջ մնացել է մի հինաւուրց աւանդավէպ՝ «Մոքոս» անունով: Աւանդավէպը գրի է առել Ս. Հայկունին էջմիածնում, 1891-1895 թթ. Զօրքորդ Հայքի Զարսանճագ գաւառցի Մինաս Բարարից: Աւանդավէպի մասին գրել է նաև Հ. Կ. Ճանիկեանը իր «Հնութիւնք Ակնայ» գրքում: Նա գրում է. «Մօքոս մեծ ըսել է, դարբինք եւ որմնադիրք եւս մեծ մուրճ մը ունեն զոր, «մոքոս» չաքուճն կը կոչեն»³⁴:

Աւանդավէպի մէջ տեղ գտած այդ վերապրուկը ցոյց է տալիս վաղընջական ժամանակների նրանց զրադմունքը՝ մետաղագործութիւնը: «Աստուածաշնչում» ուղղակի ասուած է, որ նրանք վաճառանոցներում պղնձի, երկաթի, արծաթի եւ անագի առեւտրով էին զրադուած: Փոխարերական իմաստով մոքոս նշանակել է նաև «զարբինք»: Մոքոս անունը եւ Մոկս տեղանունը դրափոխուած մոսոխ անունն է:

Ժողովրդական կեղծ ստուգաբանութեամբ Մոկք գաւառանունը

28. «Աստուածանշունչ», Գիրք Մննդոց, Գլ. Ժ-2. Մարգարէութիւն Եղեկիէլի, Գլ. ԽԵ, Գլ. Լ.Բ.:

29. Ա. Խաչատրեան, նշ. աշխ., էջ 241:

30. Խ. Սամուէլեան, Հին Հայաստանի Կուլտուրան, Բ. հար., Երեւան, 1941, էջ 277:

31. Ա. Խաչատրեան, նշ. աշխ., էջ 244:

32. Մ. Ի. Մախսիմովա, նշ. աշխ., էջ 144, 149:

33. Ա. Խաչատրեան, նշ. աշխ., էջ 245:

34. Հ. Կ. Ճանիկեան, Հնութիւնք Ակնայ, Թիֆլիս, 1885, էջ 51:

ստուգաբանուել է «գուշակ» բառից³⁵: Հին պարսկերէնում մոգ նշանակել է հեթանոս կրօնաւոր, փոխարերական իմաստով նաեւ՝ «գուշակ», որ կապ չունի ոչ ցեղանուան եւ ոչ էլ՝ տեղանուան հետ:

Մեր կարծիքով մոսխի անունը նոյնպէս ծագում է պղինձ բառից: Իրանական եւ սլաւոնական լեզուներում կայ MAD բառը, որ չեներէն, լեհերէն, ուուսերէն եւ բուլղարերէն MEDT կամ MED է, իսկ իրանական լեզուներում այն պահպանուել է մադան («պղնձահանք») բառի մէջ: Այդ հիմքից է կազմուած պղնձագործ մեղացիների Մադա երկրանունը, որ պահլաւերէնում MAD է³⁶: Այն գրականութեան մէջ է մտել Մեդիա կամ Միդիա անուններով: Հին սլաւոներէն MEDT բառը լեհերէնում նաեւ MEIDZ, MJEDZ է, իսկ գերմաներէնում SMIDA, որն ըստ Օ. Շրադերի ոչ միայն նշանակել է «պղինձ», այլ նաեւ՝ «մետաղ»³⁷: Այդ բառը, ինչպէս նշել է Օ. Շրադերը, պալմիական լեզուներում չկայ, իսկ հին կիմմերերէն UMAIDE, EMAD է, որ նշանակել է «կարմիր պղինձ»³⁸: Եւ Շրադերը գրում է. «Ես չկարողացայ տուեալներ գտնել, որպէսզի բացատրեմ այդ անունների ծագումը»³⁹:

Ինչպէս որ արմէններին համարել են Արմենոսի սերունդ, ելնելով արգոնաւորդների առասպելից, այնպէս էլ մեղացիների ծագումը բխեցրել են Կոլխիդայի թագաւորի դստեր Մեգեայի որդի Մեդոսի անունից: Ոչ Մեդոսից կարող է առաջանալ մեղացիների անունը, եւ ոչ էլ Հայկ անունից՝ հայերի ցեղանունը: Նման մի փորձ է արել Ֆր. Հոմելը՝ Արմենիա անունը ծննդաբերելով Արամէ թագաւորի անունից⁴⁰: Թագաւորների, ցեղապետների եւ իշխանների անուններից ցեղանուններ ստեղծելու դրոյթը գիտական չէ, նման փորձերն իշնում են ժողովրդական կեղծ ստուգաբանութեան մակարդակին:

Մադ («պղինձ») բառը մենք գտնում ենք, որ ծագում է Մադանի կամ Ամադանի լերան անունից, որ հարուստ է եղել պղնձով: Այն գտնում էր Աղձնիք նահանգի հարաւային մասում, Արգանա-Մադեն տեղա-

35. Յ. Օրբելի, Մոքսի թանահիւսութիւնն ու կենցաղը, Մոսկուա, 1982, էջ 23 (ոռուերէն):

36. Ռ. Արքահամեան, Պահլաւերէն - Պարսկերէն - Հայերէն - Ռուսերէն - Անգլերէն Բառարան, Երեւան, 1965, էջ 183:

37. Օ. Շրադեր, Համեմատական լեզուաբանութիւնը եւ նախնադարեան Պատմութիւնը, Բերեսպուրկ, 1886, էջ 183 (ոռուերէն):

38. Նոյնը, էջ 292-298:

39. Նոյնը, էջ 293:

40. Մ. Շորեթ, Հայաստան, Քրդստան եւ Արեւելեան Պարսկաստան, Վիեննա, 1904, էջ 79:

նունի դիմաց: Այդ բառը հնդ-արիական ծագում ունի: Մաղանի անուանը աւելանալով Անախածանցը ստացուել է Ամադանի: Բառակազմութեան նման կարգը յատուկ է եղել իրանական լեզուներին, ինչպէս՝ Սագարտա-Ասագարտա: Ամադանի լեռանուան մասին առաջինը յիշատակել է Ասորեստանի թագաւոր Տուկուտի-Նինուրտա Ա., Ք. Ա. 13-րդ դար, գրաւելով Շուպրիայի տարածքը⁴¹:

Մ. Շարէքը Ամադանին տեղադրել է երկու Տիգրիսների արանքում, Արգանայի դիմաց⁴², իսկ Վ. Տոմաչեկը՝ Բիւրեղ լեռների մօտերքը⁴³: Բոլոր դէպքերում Մաղանի կամ Ամադանի լեռները մտել են հնդ-արիացիների Միտանի պետութեան (Ք. Ա. 15-րդ դար) հիւսիսային շրջանների մէջ, իսկ միտանիները պղնձի առեւտրով կապուած էին Եգիպտոսի եւ Միջագետքի սեմացիներուն հետ:

Ն. Աղոնցի կարծիքով Մաղա անունը այնպէս է համապատասխանում Մանդային, ինչպէս MATI անունը MANTI անուան հետ, որպիսի ձեւ ունենք Ուրմիա լճի MANTIANA անունը: Դրանց հետ սերտօրէն կապուած են հայկական նախարարների անունները՝ Ա-մատ-ունի, Մանդ-ակ-ունի, որոնց զուգահեռ ձեւերը բարբառային առանձնայատութիւններ են⁴⁴: Այնուհետեւ հայագէտը նշում է, որ ցեղանուան ծագումը յայտնի չէ, բայց տողատակի ծանօթութեան մէջ ենթադրել է, որ Մաղա, մատի անունը ծագում է MADU, աւեստերէն՝ MADA, յունարէն՝ ΜΕΔΟ եւ սլաւոներէն՝ ΜΕΔΒ նոյնանիշ բառերից, որոնք կոչում են զինի կամ արբեցուցիչ ըմպելիք⁴⁵:

Ն. Աղոնցի ծագումնաբանական նման կարծիքը անընդունելի է, որովհետեւ որեւէ ըմպելիքից ցեղանուան առաջանալ չի կարող: Մաղանի լեռանունից առաջացել է MAD («պղինձ») բառը, որ բարբառային մէկ այլ տարբերակով MAT («պղինձ») բառն է, իսկ MATI կամ MANTI նշանակում է «պղնձագործ»: Այդ անուանահիմքը $\Delta > S$ հնչիւնափոխութեամբ դարձել է արիական լեզուներում MES, որ պարսկերէնում նշանակում է «կարմիր պղինձ», իսկ մեսվար՝ «պղնձախառը ձուլուածք» կամ «բրոնզ», մեսրարի՝ «բրոնզագոյն»:

Արդրագառնալով MES («պղինձ») բառի պատմութեանը Օ. Շրադերը գտնում է, որ իրանական լեզուներում գտնուող այդ բառը փոխառութիւն է գերմանական SMIDA բառից, իսկ գերմանական բառն էլ աւելի

41. Ն. Աղոնց, Հայաստանի Պատմութիւն, Երևան, 1972, էջ 74:

42. Մ. Շարէք, նշ. աշխ., էջ 47, 132:

43. Վ. Տոմաչեկ, Մասուն եւ Տիգրիսի Աղբերաց Մահմանները, Վիեննա, 1896, էջ 8:

44. Ն. Աղոնց, Հայաստանը Յուստինիանոսի ժամանակաշրջանում, Երևան, 1971, էջ 419 (ռուսերէն):

45. Նոյնը:

հին փոխառութիւն է⁴⁶: Այնուհետեւ գերմանացի գիտնականը նշում է, որ MESSING («գեղին պղինձ») բառը հիւսիսային Գերմանիայում յայտնի էր 12-րդ դարից: Այն անգլոսաքսոներէն MÄSING է, լեհերէն՝ MOSIADŹ, MOSOZ, MESNIK, հին բարձր գերմաներէն՝ MESSE, զուիցերիական բարբառում՝ MOSCH, որոնք ծագում են լատիներէն նոյն նշանակութեամբ MAESA («մետաղի կտոր») բառից⁴⁷: Սակայն Օ. Շրադերը չի նշել, որ ֆիններէն «գեղին պղինձ»ը նոյնպէս նշանակում է MESSINKI: Հին պարսկերէնի եւ ուզրո՞ֆինական լեզուների սերտ յարաբերութիւնների մասին է զրել ի. Մ. Օրանսկին⁴⁸:

Վերոյիշեալ իր կարծիքները հիմնաւոր չհամարելով, այնուամենայնիւ, Օ. Շրադերը գրում է. «Կարծում եմ, որ MESSING նշանակել է նախապէս մոսինոկների մետաղ, ելնելով Արխտոտելի այն խօսքերից, որ ասում է. «Մոսինոկների պղինձը աւելի պայծառ է, որովհետեւ նրա խառնուրդը ոչ թէ անագ է, այլ ինչ-որ մետաղ»⁴⁹: Օ. Շրադերը կարծէք թէ մօտեցել էր հարցի լուծմանը, բայց, քանի որ նման բառերի ծագումը նա գտնում էր գերմաներէնից, ուստի կանգ է առել կէս ճանապարհին:

Այսպիսով, MAD>MAT>MAΔ>MES հնչիւնափոխութեամբ, արիական հնագոյն անունից մինչեւ նոր պարսկերէնը ստանում ենք MES («պղինձ») բառի արմատական ծագումը: Այն իրանական լեզուներից անցել է ուզրո՞-ֆինական լեզուներին, որոնցից էլ ե'ւ գերմաներէնին, ե'ւ եւրոպական միւս լեզուներին:

Մեր համոզմամբ Աղձնիքի (Ալզի, Ալլէ, Շուպրիա) տարածքում, պղնձագործ հայկական ցեղերից մէկը մկրտել է իր անունը հնդ-արիական ցեղերի յորջորջմամբ՝ մասին ցեղանունը, որ նշանակել է «պղնձագործ»: Ցեղանուան հիմքը MAD>MAS բառն է ինի յոգնակերտով: Նման յոգնակերտով են բառակազմուել Կոլխի (կոլխեր) ցեղանունը եւ Պոնտոսից մինչեւ Վանայ լճի աւազանն ընկած բազմաթիւ տեղանուններ:

Մ. Շորէքի կարծիքով՝ «Տիբարենները, դայանեցիները (տառիները) եւ մոսիները հիւսիս են մզուել նրանց հին տեղը նորանոր ազգեր գալով»⁵⁰: Այս տեսակէտը լիովին բաժանում ենք, որովհետեւ Հարաւային Հայաստանի նահանգները՝ մետաղների համար բազմիցս ենթար-

46. Օ. Շրադեր, նշ. աշխ., էջ 292, 295:

47. Նոյնը, էջ 295:

48. Ի. Մ. Օրանսկի, իրանական Լեզուները Պատմական Լոյսի Տակ, Մուկուա, 1979, էջ 71 (ռուսերէն):

49. Օ. Շրադեր, նշ. աշխ., էջ 295:

50. Մ. Շորէք, նշ. աշխ., էջ 60:

կուել են Ասորեստանի եւ Աքքաղի կողոպուտի, ծանր հարկերի, հալածանքների ու գերեվարութեան: Բնական է, որ տեղաբնակները, այդ թւում նաեւ մետաղագործ/պղնձագործ- մասիսերը շարժուել են դէպի հիւսիս եւ բնակութիւն հաստատել Արեւելեան Պոնտոսում: Նոր բնակավայրում տեղական բարբառների ազգեցութեամբ մասիսի անունը $\Delta > O$ հնչիւնափոխութեամբ կոչուել է մոսիսի, ինչպէս որ Տարալը Աստուածաշնչում Թորել է, Խալկիդան՝ Կոլիսիդա, իսկ հայ անունը Տայքում՝ խոյ: Հետագայում, նոյն Տայքի տարածքում, Համշենի բարբառում երեւան եկաւ $O > O$ հնչիւնափոխութեան օրինաչափութիւնը:

Մեր կարծիքով վրացերէն սոմիսի անունը մոսիսի անունն է: Վերջինիս մոս հիմքը դրափոխուել է սոմ, որն էլ խի ածանցով՝ սոմիսի կամ սոմեխի: Ըստ երեւոյթին իրերական լեզուներին՝ Ք. Ա. երկրորդ հազարամեակում յատուկ է եղել դրափոխութեան նման համակարգը: Ժամանակակից վրացերէնում դրափոխութիւնը բառամիջում է՝ նաշխիրի $>$ նախչիրի («նախիր»), կամ՝ չագրվա $>$ չագվրա («կեղեքում»), եւ այլն: Իրերական էր, իր տեղանուանական յոգնակերտներով Հայաստանը կոչուել է Սոմիսեթի կամ Սոմիսիթի:

Մոսիսեր-մոսինոկների մի մասը Ք. Ա. 12-րդ դարում, Պոնտոսի ծովամերձ շրջաններից արշաւել է հարաւ: Նրանք ոչ թէ Պալքաններից են եկել, որպէս «ծովի ժողովուրդ», այլ Սեւ Շովի հարաւից: Այնպէս որ տեղաշարժերը տեղի են ունեցել Մեծ Հայքի տարածքում:

Մոսիսերի տեղաշարժից յետոյ, որտեղ որ նրանք բնակուել են, տեղի եւ հարեւան ժողովուրդները նրանց անուանել են մասք, մաշախ, մշակ, մեշախ, մոշեր, մուշկ եւ այլն, ինչպէս որ հայ անունը յունարէն արմէն է, պարսկերէն՝ արմանիկ եւ արմանի, արաբերէն՝ էրմանի, թուրքերէն՝ օրմանի, ոուսերէն՝ արմեանին, ուկրաիններէն՝ վերմէն, կարարդիններէն՝ երմելէ եւ այլն: Նշած անուններում կարծէք թէ պահապանուել են արմատական «պղինձ» բառը՝ մաս, մես, մոս: Իսկ սեմական ցեղերը, որոնց լեզուներում չկայ Օ հնչիւնը այդ անունը արտասանել են Ս-ով՝ մուշկու (Տ>Տ):

Գիտութեան մէջ կայ նաեւ այն կարծիքը, որ իբր հայերէնն առաջացել է փոխւգերէնից⁵¹: Հ. Հիւրշմանը գիտս կան հողի վրայ է դրել եւ ապացուցել հնդեւրոպական ընտանիքում նրա ինքնուրոյնութիւնը: Հայերէնը երբեք էլ մայր լեզուից անջատուած երկրորդական եւ երրորդական քոյր լեզուներից չի ծագում: Հնդեւրոպական ծագումով նոր լեզուները ձեւաւորման ընթացքում երկար ժամանակ ինչ-որ չափով կարող են իրար նման լինել, բայց սա չի նշանակում, որ

51. Ի. Մ. Դիակոնով, Հայ ժողովով նախապատմութիւնը, Երեւան, 1968 (ռուսերէն):

մէկն առաջացել է միւսից։ Այդ կապակցութեամբ Ա. Մէյյէն գրում է։ «Կազմաւորուած հայ ազգը հնդեւրոպական խմբում անկախ ազգ է, որն ուրիշ ոչ մէկի հետ յատուկ կապեր չունի»⁵²։

Եթէ պղնձի գիւտը Հայկական Լեռնաշխարհում Ք. Ա. Զ-րդ հրարամեակից է, իսկ հայերը եղել են առաջին պղնձագործներից մէկը, ապա վստահ կարելի է ասել, որ հնդեւրոպական մայր լեզուից ան-ջատուած հայկական ցեղախմբեր մետաղամշակութեան հետ գործ են ունեցել առնուազն 5-րդ հազարամեակում եւ մէրտել իրենց հասարակական անունը։

Հայկական Լեռնաշխարհում, հազարամեակներ առաջ, պատմութեան ասպարէզ եկաւ մետաղագործ մի ցեղ, որին հարաւից սեմական ցեղերն անուանել են արման, հիւսիսից իրերական ցեղերը՝ սոմեկսի (մոսոխ), արեւելքից իրանական ցեղերը՝ արմանիկ եւ ֆլա, արեւմուտքից յունական ցեղերը՝ արմէն, իսկ տեղի փոքրասիական ցեղերը՝ հայ, խայ, խոյ։

Հայերի ցեղային տարածքը՝ Հայկական Լեռաշխարհը կամ Հայքը նոյն ցեղերն ու ցեղախմբերն անուանել են Խայսա, Արմանա, Արմանու, Արմենիա, Արմինա, Արմէն, Սոմինեթի, Ուրարտու, Արարատ։

Հայերը եղել են Հայքի տեղաբնակ, հնդեւրոպական ժողովուրդներից մէկը, պղնձագործ առաջին ցեղերից մէկը։ Նրա բոլոր անուանումները նոյն բովանդակութիւնն ունեցող հասարակական նոյն եղբն են։

52. Ա. Մեյյէն, Հայագիտական Ռւսումնասիրութիւններ, Երևան, 1978, էջ 19:

THE ARGONAUTS AND ARMENIA

SERGEY OUSSARIAN

(Summary)

According to a Greek myth which tells about Jason leading the Argonauts to Colchis in quest of the Golden Fleece, one of them, Armenos by name, did not return with Jason. He stayed behind and became one of the forefathers of the Armenians. This myth originated the theory that Armenians came from the west. It is generally accepted now that the legend of the Golden Fleece in reality speaks of the Greeks searching for gold, copper, iron and other metals in Colchis. The article discusses the fact that the Armenian Plateau was one of the most ancient metallurgic centers of the world, and that the Armenians were one of the first metallurgic culturers of the area. And based on linguistic evidence the author reaches the conclusion that "Hai", "Armen", "Somekhi", "Fla" (all names given to Armenians) mean metallurgist.